

Ռամկավարները և Հայկական հարցը (1908-1917 իրականություն)

Սարգսյան Սուրեն Թ.

ս.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5 (470+571, 477); EDN: ZQXKGH;

DOI: 10.58587/18292437-2023.5-36

Հանգուցաբառեր՝ կուսակցություն, ռամկավարներ, Հայկական հարց, պաշտոնաթերթ, ծրագիր, համագումար, նպատակ, համագործակցություն

Рамкавары и Армянский вопрос (Октябрь 1908-1917)

Саргсян Сурен Т.

д. и. н., профессор, ведущий научный сотрудник Института истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. История «Армянского вопроса» о существовании и будущем армянского народа, достаточно хорошо изучена, однако в отношении традиционных партий почти ничего не сделано. В частности, никогда не было никакого упоминания о связях в 1908 году созданной армянской Конституционной партии Рамкавар и «Армянского вопроса».

Политические убеждения партии стали принципами равенства, свободы, верховенства закона и национального улучшения жизни армянского народа и достижения права на достойную жизнь. Она выступала за защиту интересов армянства и постоянно преследовалась турецкими властями. Вехой для нее было то, что «Армянский вопрос» возник исторически, а западное армянство долго ждало его решения, но безрезультатно, поскольку младотурецкое правительство не только проигнорировало его, но и, воспользовавшись случаем Первой мировой войны, совершило геноцид армянского народа. Разочарованные этим рамкавары с тех пор полагались на помощь России.

Ключевые слова: Партия, рамкавары, Армянский вопрос, официальная газета, программа, съезд, цель, сотрудничество

Ramkavars and the Armenian question (October 1908-1917)

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor,

Leading Researcher, at the NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. The history of the "Armenian question" about the existence and future of the Armenian people has been studied quite well, but almost nothing has been done regarding the traditional parties: In particular, in 1908. There has never been any mention of the links between the established Armenian Constitutional Party Ramkavar and the Armenian question:

The political beliefs of the party have become the principles of equality, freedom, the rule of law and the national improvement of the life of the Armenian people and the achievement of the right to a decent life: He advocated for the protection of the interests of the Armenians and was constantly persecuted by the Turkish authorities: The milestone for him was that the Armenian issue arose historically, and Western Armenians have been waiting for its solution for a long time, but to no avail, since the Young Turk government not only ignored it, but also, taking advantage of the First World War, committed the genocide of the Armenian people: Disappointed by this, the Ramkavars have since relied on Russia's help:

Keywords: party, ramkavary, Armenian question, official newspaper, program, congress, goal, cooperation

Նախաբան

Բեռլինի 1878 թ. հունիսի 1(13) վեհաժողովից հետո հայ ժողովրդի անբաժանելի ուղեկիցը դարձած Հայկական հարցը՝ հաճախ բուռն քննարկումների, ազատագրական պայքարի վերելքների ու փառապանծ հաղթանակների աղբյուր դարձավ, ինչպես նաև՝ հուսախաբությունների, հուսալքումների, որոնց վերջին ողբերգանվազը եղավ արցախահայության հայրենագրկումը: Հիրավի, մերօրյա բուռն իրադարձություններն ու Արցախի հայաթափումը, անկասկած, Հայոց պատմության ցավալի ու ողբերգական ժամանակահատվածներից է,

հետևաբար նաև՝ Հայկական հարցի հերթական վճռական փուլերից մեկը:

XIX դարի երկրորդ կեսին գիտարդյունաբերական բուռն ու աննախադեպ զարգացող աշխարհում տեղի ունեցած կարևորագույն տեղաշարժերի արդյունքում մարդկությունը XX դարասկզբին վայրի մոլուցքով նետվեց աշխարհը վերաբաժանելու: Իրար բախվեցին երբեմնի բարեկամները, հանուն նյութական շահերի միավորվեցին դարավոր թշնամիները: Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագրով, ապա Բեռլինյան վեհաժողովում բանաձևված Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագի-

տության կռվան, որը մեծ տերություններն սկսեցին օգտագործել «հիվանդ ծերունի» Օսմանյան կայսրությունից պատառներ պոկելու համար: Ի դեպ, ընդձենք, որ «Հայկական հարցը» սոսկ դիվանագիտական եզրույթ չէ, հետևապես, հարկավոր է դիտարկել այն նաև իրավաբանական, տնտեսագիտական, ժողովրդագրական, մշակութային և էթնոհոգեբանական տեսանկյուններից: «Հայկական հարցի» պատմությունը բավականին լավ է ուսումնասիրված, սակայն ավանդական կուսակցությունների կողմից դրան վերաբերմունքի առումով՝ գրեթե ոչինչ արված չի:

Վաստակաշատ Լեոն ասում էր՝ Հայկական հարցն այնքան հին է, որքան հայ ժողովուրդը: Այդ առումով լիովին քննություն է բռնում մարդկության «Պարույրաձև» զարգացման թեզը, ըստ որի, ամեն անգամ պատմությունը կրկնվում է նոր մակարդակում: Իսկապես, հայ ժողովրդի ու Հայկական հարցի պատմության առումով այդ թեզն ամբողջովին քննություն է բռնում: Ուստի հարկավոր է լավ սերտել պատմությունը, դասեր քաղել դրանից, ավելի խելամիտ գործել, իրատես լինել, «երկաթե շերեփի» մասին չնոռանալ և աջ ու ձախ բոլորին մեղադրելու փոխարեն ընդունել մեր թույլ տված սխալները՝ դրանք այլևս չկրկնելու համար: XX դարի սկիզբին խիստ թուլացած, գերտերությունների պաշտպանությունից զրկված, աշխարհակործան մարտահրավերների դեմ հայտնված ու շփոթված հայ ժողովուրդը մտավորականության և ազգային կուսակցությունների քարոզչակազմակերպական աշխատանքների շնորհիվ, կարողացավ սթափվել և ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել:

Ռամկավարները և Հայկական հարցը

XIX դարի վերջին քառորդում 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից ու Բեռլինի վեհաժողովից հիասթափված, ալեկոծվող Արևմտյան Հայաստանում իրար հետևից ասպարեզ իջան ազգային կուսակցությունները՝ 1885 թ. Արմենականը, 1887 թ.՝ Հնչակյանը և 1890 թ.՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որոնց հիմնական նպատակը Հայաստանը¹ և բազմաչարչար հայ ժողովրդին թուրքական բռնատիրությունից ազատելն էր: Իսկ նրանց ծրագրերի միջև եղած տարբերությունը սոսկ այդ ազատությանը հասնելու միջոցների մեջ էր:

1908 թ. Արմենական և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների միախառնումով ստեղծվեց Հայ Մահմանադրական Ռամկավար կուսակցությունը (այսուհետև՝ ՀՍՌԿ): Կուսակցություն, որի քաղաքական հավատամքը հավասարություն, ազատություն, օրենքի գերակայու-

թյուն սկզբունքները և ազգային՝ հայ ժողովրդի կյանքի բարելավումն ու մարդավայել ապրելու իրավունքի նվաճումը դարձան²: ՀՍՌ կուսակցությունն անընդհատ փորձում էր հզորանալ և հանդես գալ որպես հայության շահերի պաշտպան ու կազմակերպիչ, սակայն թուրքական բռնապետարտեսական մեքենան և քաղաքական ուժերի անհանդուրժողական կեցվածքը մամլիչի տակ էին պահում կուսակցության կառույցները և նա ստիպված գործում էր Պատրիարքարանի հովանու ներքո: 1912 թ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո հայ իրականության մեջ գործող բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում և ՀՍՌԿ-ն³, հետաքրքրվում էին ու հետամուտ այդ հարցի արդարացի լուծմանը: Այդ հարցը տեղ գտավ նաև կուսակցության ծրագրային փաստաթղթերում: Նրա համար ուղենիշային էր այն, որ Հայկական հարցն առաջացել է պատմականորեն, իսկ արևմտահայությունը երկար ու համբերատար սպասել է նրա լուծմանը, սակայն ապարդյուն, որովհետև սուլթանական կառավարությունը զանց առավ այն: Ուստի հայն «*իրատունք ունեղ սպասամբելու: Միայն հարկատու էր ոյժ գոյացունել, քանի որ գաղափարական շենքը իրական հողի վրայ պիտի կառուցանել և ոչ թե՛ օղի մէջ*» [4, էջ 170]:

Կուսակցության ծրագիրը կայսրության ժողովուրդների գոյության երաշխիք էր համարում զանազան արտոնությունների վերացումը, թափառաշրջիկ և պարագիտ ցեղերի զինաթափումն ու նստակյաց դարձնելը, «*ջնջել համիդիէ գորագունդերը*» [6, էջ 30]: Ընդգծենք, որ ռամկավար առաջնորդները բացառապես արևմտահայեր էին, քաջածանոթ թուրքական դժնդակ իրականությանը և ծրագիրը գրելիս, անկասկած, հաշվի էին առել դրված նպատակին հասնելու բոլոր հնարավորություններն ու խոչնդոտները: Գտնվելով իրադարձությունների կիզակետում նրանք չէին կարող առաջարկել իրականությունից կտրված ու անիրագործելի ծրագրեր:

1912 թ. ՀՍՌԿ Վասպուրականի շրջանի պաշտոնաթերթ «Վան-Տոսպը»⁴ հաճախ էր անդրադառնում Հայկական հարցին: Ռամկավարները, հաշվի առնելով անցյալի դառը փորձը, ի սկզբանե որոշակի վերապահումով էին մոտենում հայկական գավառներում բարենորոգումների թուրքական իշխանությունների խոստումներին: «Վան-Տոսպի»⁵ մի խմբագրա-

¹ Մինչև XX դարի սկիզբը Հայաստան ասելով հասկացվում էր բացառապես Արևմտյան Հայաստանը:

² ՀՍՌ կուսակցության ստեղծման պատմությունը մանրամասն տե՛ս [8]

³ Կուսակցությունը շատ արագ ըմբռնելով երիտթուրքերի զիջատիչ բնույթը, արդեն 1910 թ.-ից ինքնահրաժարվեց սահմանադրական եզրից:

⁴ Վան-Տոսպ պարբերականի մասին տե՛ս [7]:

⁵ Պարբերականը՝ որպես կիսամյա գիտական, կրոնական հանդես, լույս է տեսել 1911-1914 թթ. Վանում: 1912 թ. սկսվում է թերթի Նոր շրջանը: Այն դառնում է ՀՍՌ կուսակ-

կանում ընդգծվում էր, որ ամեն անգամ, երբ բարձրացվում է բարենորոգումների հարցը, թուրքական պաշտոնական շրջանները հանգստացնում էին ժողովրդին՝ ասելով. «Սպասեցե՛ք քիչ մը, պատերազմը անցնի, անգամ մը ինքզինքնիս գտնենք, յետոյ Ձեր մասին բան մը կրնենք անսպասուհառ» [16, 1912, թիվ 28, էջ 20]: Պարբերականի Հրագրան հոդվածագիրը Հայկական հարցի վերաբացումը հայության համար վտանգավոր էր համարում և անսքող ակնարկում էր, որ դեռ 1890-ական թթ. սկսած, Հայկական հարցի բուռն քննարկումներին միշտ հաջորդել են հայերի ջարդեր և հիմա էլ,- գրում է նա,- մարգարե դառնալու կարիք չկա գուշակելու համար «արիւնոտ դէպքերու մեծ հաւանականութիւնը» [16, 1912, թիվ 1, էջ 2]: Պարբերականի մեկ այլ համարում թղթակիցը վկայակոչելով գինվորական վարժարանում թուրք սպայի արած հայտարարությունը «Պատերազմեն յաղթական ելնենք, թե ոչ, գիտենք ինչ դաս պիտի տանք անհաստատարիմ հայերուն և քիւրտերուն» [16, 1912, թիվ 2, էջ 35], լրջորեն զգուշացնում էր մոտալուտ վտանգի մասին: Թեև այս տեսակետը հեռու չէր ճշմարտությունից, սակայն, քանի որ Հայկական հարցը վերաբացվել էր Ռուսաստանի նախաձեռնությամբ, դրա համար էլ մեր ազգային շրջանակները դրական հույսեր էին փայփայում:

Չափավոր պահանջներով հանդես եկող ռամկավարները դեմ էին հեղափոխական կամ ապստամբական ելույթներին և պաշտպանում էին օսմանյան ժողովուրդների հետ հայ բնակչության խաղաղ զարգացման գաղափարը: Իրականում թուրքական բռնապետության մամիչի պայմաններում գործող արևմտահայ քաղաքական ուժերի մեծ մասը հարկադրված եղավ կանգնել իշխանության կողմը, քարոզելով հայ բնակչությանը պաշտպանել օսմանյան հայրենիքը: Ռամկավարները տալիս էին Հայկական հարցի լուծման իրենց բանաձևը, որն ամբողջանում էր «կեանքի, գոյքի և պատուի անձեռնմխելիութեան սրբազան իրաւունքի» մեջ [16, 1912, թիվ 4, էջ 40]: ՀՌԿ-ի տեսաբանները գտնում էին, որ իրենց պահանջներն օգտակար են ոչ միայն հայերին, այլև նրանց հարևաններին. «Մենք ապստամբներ չենք և Հայկական հարցը անջատողական շարժում մը չէ եղած երբեք, մեր պահանջները տարրական արդարութեան պահանջներ են, որոնց իրագործումով հաստատու պիտի օգտուին նաև քուրդ ու թուրք ժողովուրդները և ի վերջո ամբողջ պետութիւնը» [16, 1913,

ցության Վասպուրականի շրջանակի պաշտոնաթերթը: Խմբագիրն էր Նշան Հակոբյանը, ապա Վարդան Պապիկյանը: Այնուհետև՝ 1915-1918 թթ.՝ որպես Հայ Ռամկավարների պաշտոնական օրգան, լույս է տեսել Թիֆլիսում: Պատասխանատու խմբագիրն էր Արտակ Դարբինյանը: 1919 թ. հասարակական, քաղաքական, գրական այդ շարքաթերթը տեղափոխվում է և վերանվանվելով Հայաստանի ձայն, սկսում լույս տեսնել Երևանում: [5, էջ 90]:

թիվ 1, էջ 3]: Հետևելով օրեցօր վտանգավոր դարձող զարգացումներին և խոսքն ուղղելով իշխանություններին՝ ռամկավարներն անհրաժեշտ էին համարում հաճախ կրկնել. «Մի անգամ ընդմիջտ կը հայտարարենք, լավ մտիկ ըրեք, հայ ազգը դժգոհ է, բայց ոչ ապստամբ, թե նա ամբողջ 30 տարվա ընթացքում ուրիշ նպատակ չի ունեցել, քան հայ ցեղի ինքնուրույն կուրտուրական զարգացումը նորոգուած ու բարեկարգ օսմանյան պետութեան մէջ... այս է եղած մեր ազգային նշանաբանը» [16, 1913, թիվ 2, էջ 14]:

Ամեն անգամ, երբ թուլանում էին Օսմանյան կայսրության միջազգային դիրքերը, արևմտահայության մոտ արթնանում էին ազատագրվելու հույսերը: Այսպիսի իրավիճակ առաջացավ նաև 1911 թ. թուրք-իտալական և Բալկանյան պատերազմների ժամանակ: Այդ հույսերը իսպառ վերացնելու նպատակով թուրքական իշխանությունները Բալկանյան թերակղզուց խուճապահար գաղթող և քրիստոնյա հպատակների հանդեպ կատաղի ատելությամբ լցված մահմեդականներին բնակեցնում էին հայկական վիլայեթներում, սրելով առանց այդ էլ այնտեղ վաղուց գոյություն ունեցող հակամարտությունները: Հետո պատերազմներում կրած պարտության մեղքերն իշխանություններն սկսեցին վերագրել հայ բնակչությանը, ինչն ավելի էր սրում իրավիճակը: Ստեղծված այդ ընդգծված հակահայկական մթնոլորտը խիստ անհանգստացնում էր ՀՌԿ-ին ու ստիպում նրան փրկության միջոցներ որոնել: Հայկական հարցի վերաբացման համար էլ առաջացել էին բոլոր անհրաժեշտ նախադրյալները. ա) Թուրքիան պարտվել էր Բալկանյան պատերազմում: բ) Մեծ տերությունները լրջորեն հետաքրքրված էին դրա արդյունքներով: գ) Հայկական հարցի նկատմամբ ընդգծված բարյացկամ վերաբերմունք էր դրսևորում Ռուսական դիվանագիտությունը: դ) Լոնդոնում գումարված դեսպանաժողովում Հայկական հարցը պաշտպանելու խնդրանքով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը 1912 թ. հոկտեմբերի 15-ին, ապա դեկտեմբերի 24-ին դիմեց ռուսական իշխանություններին: ե) Նոյեմբերի 10-ին վեհափառը հատուկ կոնդակով Պոդոս Նուբարին լիազորեց Բեռլինի համաձայնագիրը ստորագրած պետությունների առջև բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման հարցը: Այդ ժամանակից սկսած Պոդոս Նուբարի Ազգային պատվիրակությունը գտնվում էր Փարիզում և արտահայտում հայ ժողովրդի հավաքական շահերը:

1913 թ. հուլիսին Կ. Պոլսում տեղի ունեցավ ՀՌԿ երկրորդ ընդհանուր պատգամավորական ժողովը: Համագումարում ի գիտություն ընդունվեց այն իրողությունը, որ 1912 թ. Հայկական հարցի վերաբացվելուց հետո, միջազգային տարբեր ատյաններում հայոց շահերը ներկայացնում

եր Պ. Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունը, որի գործունեությունը որոշակի հույսեր էր ներշնչում, սակայն մեծ տերությունների մրցակցությունը կարող էր ավելի վատթարացնել հայերի վիճակը [1, էջ 231]: Դրանից ելնելով ռամկավարները որոշեցին կոչ անել բոլորին առավել զգույշ լինել: Երկար քննարկումների արդյունքում ընդունվեցին կարևոր որոշումներ՝

1. Սպասել մեծ տերությունների Հայկական հարցի վերաբերյալ մոտալուտ հաշտության վեհաժողովի որոշումներին:

2. «Արևելեան նահանգներում գարկ տալ ինքնապաշտպանութեան գործին» [1, էջ 235]:

3. Հայաշատ երկրներում լուսաբանել պահի լրջությունը, Հայկական հարցի վիճակը և օրախնդիր շատ այլ հարցերի վերաբերյալ ՀՌԿ-ի տեսակետները:

Կուսակցության մեկ այլ պաշտոնաթերթ «Ազգը» նշում էր, որ քանի դեռ հայ ժողովուրդն իր սեփական ճակատագրի դեկը չի վերցրել իր ձեռքը, ամբողջ ուժը չի կենտրոնացրել դրա շուրջը, «Հայկական հարցը ամէն առեն տառապանքի, արիւնի և աւերի գնով երևան պիտի գայ պետութեանց մասնատր շահերուն ծառայելու համար: Պէտք է մեկընմիշտ իմանանք,-սալում էր թերթի խմբագրականում,-որ մարդկային ու ազգային բոլոր իրաւունքները հիմնուած են շահի վրայ ու զանոնք ձեռք ձգելու համար սեփական ուժն է միակ դարմանն ու միջոցը, ուժ խելքի, ուժ արտի, ուժ շրջահայեցութեան, ուժ բազուկի ու զէնքի» [10, 1914, հունվարի 7, թիվ 31]: Միաժամանակ, չէր անտեսվում արտաքին օգնությունն ու դիվանագիտական աջակցությունը:

Ռամկավարներն սկզբում դրական վերաբերվեցին 1914 թ. հունվարի 26-ի մեծ տերությունների ընդունած բարենորոգումները՝ բնութագրելով այդ ծրագիրը որպես «հաջող վերջավորութիւն»: Նրանք գրում էին, թե հայ ժողովուրդն «այսօր ուրեմն կրնա քիչ մը ավելի յույսով ու վստահութամբ նայիլ ապագային...» [10, 1914, մարտի 4, թիվ 37]: Բայց հետո թեր-հավատությամբ լցվեցին այդ ծրագրի հանդեպ: Այա կանգնելով չեզոք դիրքում, այնուամենայնիվ, չցանկացան վատատես լինել: «Չենք կրնար գուշակել,- գրում էին նրանք «Ազգում», - թե ապագայ պիտի ունենա, որչափ տոկուն ու տևական պիտի ըլլա ծրագիրը, բայց պետք է որ առանց հռետեստութեան քիչ մը յույսով նայինք անոր վրա և մեր կողմէ աշխատինք դյուրացնել անոր գործադրութիւնը» [10, 1914, մարտի 18, թիվ 39]:

Կուսակցության որոշումները մեծ ի մասամբ անորոշ էին, քանի որ նրանք փնտրտուքի մեջ էին: Հայկական նահանգներում բարենորոգումների անցկացումը, միաժամանակ կապում էին թե՛ մեծ տերությունների, թե՛ իթթիհադական կառավարության և թե՛ արևմտահայ հասա-

րակական քաղաքական ուժերի հետ: Նրանք հանդես եկան հայտարարությամբ, որտեղ Օսմանյան սահմանադրությանը հաջորդ տարիները բնորոշեցին որպես Հայ ազգային հուսախարության շրջան, իսկ դրա բարձրակետը համարեցին Կիլիկիայի 1909 թ. կոտորածը: ՀՌԿ-ն խիստ կարևորում էր ինքնապաշտպանության գործի կազմակերպումը, որը սակայն, նրանց կարծիքով, գտնվում էր թերի վիճակում [9, էջ 129]: Միաժամանակ, ակնհայտ էր, որ ռամկավարներից շատերը, հատկապես նրանց արմենական հատվածը, արևմտահայության ազատագրության հույսը շարունակում էր կապել Ռուսաստանի հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ի նպաստ Հայկական հարցի, շարժում ծավալվեց բոլոր ուժերի համատեղման համար: Պատրիարքարանը դատապարտում էր միջկուսակցական պայքարը [11, 1914, հունիս, էջ 522], «Մշակը» ողջունում էր համախմբման գաղափարը [15, 1913, նոյեմբեր 14, թիվ 254], «Արևելքը» հայտարարում էր, որ այն ուժ կտա «կուսակցությունների յարատեւմանը եւ հզօրացմանը» [13, 1914, դեկտեմբերի 31, թիվ 7220]: Ծարժմանը դրական արձագանքեցին ՀՅԴ-ն, Վերակազմյալները, ՀՌԿ-ն: Սակայն վերջինս ավելի հրատապ էր համարում ինքնապաշտպանության խնդիրը, որովհետև մտավախություն ուներ, որ 1894-96 թթ. նման հայկական բարենորոգումների վերաբերյալ համաձայնագրերը կարող են հանգեցնել «միեւնոյն արիւնտ արդիւնքին» [10, 1914, հունվարի 21, թիվ 38]: Համախմբման այդ կոչերն ավարտվեցին ազգային բոլոր կուսակցությունների համերաշխության մասին հայտարարություններով: Սակայն, իրականում նրանք այնքան էլ համերաշխ ու միասնական չէին:

Առաջին աշխարհամարտի տարիները փոթորկալից եղան հայ ժողովրդի կյանքում: ՀՌԿ-ն գիտակցելով, որ սկսված պատերազմը կարող է թուրքերին հարմար առիթ դառնալ հայերի հետ հաշվեհարդար տեսնելու համար, պատերազմի սկզբում կանգնեց օսմանյան հայրենիքի պաշտպանության դիրքերում և կոչ արեց հայերին կատարել իրենց զիվորական պարտքը: «Հրաժարիլ ընդմիշտ,- գրում էր Վան-Տոսայր,- պատերազմի միջոցին, ներքին վրդովիչ քաղաքականութենէ, այս կտոլորեցնէ հայերուն ներկայ պատերազմի ընթացքին եւլրուպական տերութիւններու որդեգրած ուղղութիւնը» [16, 1914, թիվ 43-92, էջ 460]: 1915 թ. գարնանը, ՀՌԿ-ի ղեկավարությունը հաստատվեց Թիֆլիսում և ձեռնամուխ եղավ «Վան-Տոսայի» վերահրատարակությանը: Բախվելով ցեղասպանության փաստին և արևմտահայության բնաջնջմանը, ՀՌԿ-ն փոխեց իր տեսակետները Հայկական հարցի լուծման ուղիների մասին:

1915 թ. մայիսի 20-ին ՀՌԿ-ն և հնչակյանները Ալեքսանդրիայում կնքեցին համաձայնագիր [3, , էջ 198; 14, 1950, հունիսի 2], որում ասվում էր. «երկու կողմերու մտաւոր նպատակն է ինքնավար Հայաստան և Կիլիկիա» [3, էջ 198], որը պետք է դրվի Անտանտի կամ Ռուսաստանի հովանավորության (protectorat) ներքո և առաջարկվում ստեղծել Հայաստանի ինքնավարություն Ռուսական պետության կազմում: Համաձայնող կողմերը պատրաստվում էին գորակցել Պ. Նուբար փաշայի պատվիրակությանը, իսկ Նուբարը սպագա միջազգային վեհաժողովում, որպես հայկական պատվիրակության լիազոր ներկայացուցիչ, դա առաջարկելու էր երկու կողմերի թեկնածուներին [3, էջ 201]:

Ռամկավար տեսաբաններից Վարդան Պապիկյանը «Հայկական հարցի շուրջ» վերլուծական հոդվածում հետադարձ հայացք էր նետում Հայկական հարցի անցած ուղու վրա և փորձում վերաիմաստավորել այն: Հեղինակը միանշանակ չէր տեսնում եվրոպական դիվանագիտության դերը հայկական խնդրում: Նա ո'չ արդարացնում և ո'չ էլ դատապարտում է նրա միջամտությունը Հայկական հարցում, այլ ամեն ինչ տեսնում է իր տեղի ու ժամանակի համատեքստում [16, 1916, հունվարի 24]: Հեղինակի կարծիքով կոտորածները տեղի էին ունենալու անկախ մեր պահվածքից, պարզապես «մեր պարտքն էր առավել զգոն լինել, որը չէր» [16, 1916, հունվարի 24]: Այստեղ պետք է նկատել, որ ռամկավարներն իրենց քննադատության մեջ մոռանում էին, որ հայության ճակատագիրը ոչ թե հայերն ու նրանց կուսակցություններն էին տնօրինում, այլ՝ ելնելով իրենց քաղաքական շահախնդրություններից, մեծ տերությունները:

Ռամկավարներին մտահոգում էր Թուրքիայի սպագա կառուցվածքը, որից անմիջականորեն կախված էր արևմտահայության ճակատագիրը: Այս հիմնահարցի մասին ռամկավար Միհրան Տամատյանը 1916 թ. «Արեւ» թերթում տպագրել է «Ասիական Թուրքիո սպագան» հոդվածաշար: Նա գտնում էր, որ Թուրքիայի համար լավագույն կառուցվածքը նրա վերածումն էր Շվեյցարիայի տիպի մի պետության: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ թուրքերը անկարող են հանդուրժելի պայմաններ ստեղծել հպատակ ժողովուրդների համար: Դրա համար անհրաժեշտ էր, որ Թուրքիայում նշանակվեն եվրոպական կառավարիչներ: Տամատյանը ցույց էր տալիս նաև, որ եվրոպական պետությունների միջև կային լուրջ հակասություններ⁶: 1916 թ. Տամատյանը ցույց էր տալիս, որ, անկախ ամեն ինչից, հայ ժողովրդի

համակրանքը Ռուսաստանի կողմն էր [12, 1916, հոկտեմբերի 16]:

«Վան-Տոսպը» ևս շեշտում էր, որ արևմտահայությունն իր ազատագրության հույսը կապել էր Ռուսաստանի հետ. «Թուրքահայերը դեպի Ռուսաստան ունեցել են դարավոր անայայտ համակրանք և իրենց ակնկալություններն իրակաճացած տեսնելու հավանականությունը փնտրում են Ռուսաստանի մոտ» [16, 1916, օգոստոսի 28]: Որպես հավատարմության գրավական, «Վան-Տոսպը» զգուշացնում էր Ռուսաստանին գրավյալ տարածքներում մնացած քրդերի մասին: Ծոցում պահված օձերի հետ էր համեմատում նրանց, ովքեր, ձևականորեն հայտնելով իրենց հնազանդությունը Ռուսաստանին, հարմար պահին սակայն «նամարդ բորենու նման հարձակվում են երեկվա իր կյանքը բաշխողի վրա, հոշոտում» նրան, կողոպտում, ջարդում առանց խնայելու և «ավելի մեծ վտանգ էին դառնում բանակի համար, քան թե առջևի թշնամին» [16, 1916, օգոստոսի 7]:

Անգլո-ֆրանս-ռուսական 1916 թ. գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր, որ պատերազմի հաղթանակի դեպքում Օսմանյան կայսրությունը տրոհվելու էր և դրա մաս կազմող Կիլիկիան մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ: Ֆրանսիան իր գաղութատիրական նկրտումները քողարկում էր տեղի հայերին ինքնավարություն շնորհելու խոստումով և, ընդառաջելով Պողոս Նուբարի առաջարկին, 1916 թ. նոյեմբերի 28-ին որոշեց հայ տարագիրներից Կիպրոսում կազմել զորաջոկատ «Արևելյան լեգեոն» անունով: Ռամկավարները, ողջունելով «Արևելյան լեգեոնի» ստեղծման գաղափարը, Եգիպտոսի հայ կուսակցությունների հետ կազմում են «Հայ ազգային միությունը», որի նպատակն էր գորավիզ լինել ֆրանսիական կառավարության այդ նախաձեռնությանը: 1917 թ. մարտի 16-26-ը ՀՌԿ, ՀՅԴ, ՄԳՀ և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները ԱՄՆ-ում ևս բանակցում են և կազմում են «Ամերիկայի հայ ազգային միություն», որը դառնում է Ազգային պատվիրակության ներկայացուցիչ մարմինը Ամերիկայում:

Երջադարձ դեպի Ռուսաստան

Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո ռամկավարները պաշտպանում էին գաղթականների համագումար հրավիրելու կոչը [16, 1917, մայիսի 7] և ակտիվ մասնակցություն ունեցան 1917 թ. մայիսին Երևանում գումարված Արևմտահայ առաջին համագումարի աշխատանքներին: 1917 թ. ապրիլի 24-ին Թիֆլիսում կայացավ Ռամկավար կուսակցության Կովկասի և գրաված վայրերի շրջանային պատգամավորական ժողովը [16, 1917, ապրիլի 25]: Ժողովի մասնակիցները եր-

⁶ Հոդվածաշարը լույս է տեսել 'Արեւի' 1916 օգոստոսի 4-ի, 7-ի և հոկտեմբերի 16 համարներում:

կար քննարկումներից հետո որոշում են այդուհետ հրաժարվել եվրոպական տերությունների օգնության գաղափարից: Հայաստանի ապագայի հարցում էլ հույսը դնել միայն դեմոկրատական Ռուսաստանի օգնության վրա: Նրանք հեռագրեցին իշխան Լվովի Ժամանակավոր կառավարությանը. «*Հատուկ լինելով, որ մեր դժբախտ Հայաստանի ապագան կախուած է ռուսական հեղափոխութեան բարեհաջող վիճակից, մենք գորակցում ենք Ձեզ»* [16, 1917, ապրիլի 25]: Ռամկավարները պաշտպանում էին ապագա ժողովրդավարական Հայաստանի գաղափարը և մերժում դասակարգային պայքարը: Դա էլ առիթ է հանդիսացել, որ կուսակցությունը որակվի պահպանողական: Ռամկավարները սարսափած էին հատկապես ռուսական բանակի քայքայումից: Նրանց համար անընդունելի էր, որ «*գործի մի մասը թողած իր կարեւոր գործը վերադառնում է գյուղերը, որ մասնակցի հողի բաժանմանը... հրապուրվում է բոլշևիկների կոչերով, պատրաստ է տապալել միասնությունը և ստեղծել սոցիալիստական կարգեր»* [16, 1917, մայիսի 7]:

Պատմական հեռվից փաստերի համադրումը և թռուցիկ վերլուծությունն իսկ ցույց են տալիս, որ չնայած մի շարք հարցերում իրենց պահպանողականությանը, ռամկավարները Հայկական հարցի լուծման տեսանկյունից ճիշտ էին: Պատկերացնենք մի պահ, երբ Ռուսաստանը պատերազմից դուրս գար առանց հոկտեմբերյան հեղաշրջման...

1917 թ. հուլիսի 1-4-ը Բոստոնում տեղի ունեցավ ռամկավարների Ամերիկայի շրջանակի ԺԴ պատգամավորական ժողովը: Այն բարձր էր գնահատում Ազգային միության գաղափարը, նրա նպատակն ու գործունեությունը, և դրանք լրիվ համապատասխան էր համարում կուսակցության սկզբունքներին ու ազգային համերաշխության բաղձանքին: Ժողովը որոշում է, որ ՀՌ կուսակցության բոլոր ակումբները պետք է սատարեն Հայ ազգային միությանը: Ռամկավարները խիստ մտահոգ էին 1917 թ. բռնկված ռուսական հեղափոխությամբ, հատկապես այնքանով, թե որքանով և ինչպես էր այն անդրադառնալու Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող փոքր ժողովուրդների, մասնավորապես՝ հայերի վրա:

ՀՌ-ն ողջունեց 1917 թ. ապրիլի 11-ին հիմնադրված Հայ ժողովրդական կուսակցությանը և հույս հայտնեցին, որ «*գուտ թուրքահայկական հարցով զբաղուող իրենց կուսակցությունը կկարողանայ համագործակցել նրա հետ»* [10, 1917, մարտի 26]: Նրանք հայտարարում էին, որ Հայկական հարցը, հանդիսանալով միջազգային դիվանագիտության խնդիր, կարող էր լուծում ստանալ միայն միջազգային վեհաժողովում, իսկ իրենք պետք է աշխատեին,

որպեսզի հարցը լուծվեր «*ըստ թուրքահայերի ցանկություն»* [2, էջ 43]: Ապրիլի 24-ին իշխան Լվովին ուղղված նրանց հեռագրում նշվում էր, որ Հայաստանի ապագա բախտը կախված է ռուսական հեղափոխության ելքից, իսկ ՌԿ-ն իր աջակցությունն ու գորակցությունն է հայտնում «*վերածնվող Ռուսաստանի անբասկողման բոլոր կողմնակիցներին»* [16, 1917, մարտի 12]:

1917 թ., հոկտեմբերի 25-ին Ռուսաստանում բոլշևիկները զավթեցին իշխանությունը և սկսեցին անջատ բանակցություններ վարել Գերմանիայի հետ: 1918թ. մարտի 3-ին էլ կնքեցին Բրեստի պայմանագիրը, որով թուրքերը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը, նաև Կարսի ու Բաթումի շրջանները: Ռամկավարներին լրջորեն անհանգստացնում էին հատկապես բոլշևիկների հակապատերազմական կոչերը, որոնք, փաստորեն, հանգեցնում էին բանակի քայքայմանը [2, էջ 45]: Կրկին Հայ ժողովրդը հայտնվեց դամոկլյան սրի ներքո և նրանք՝ ելնելով դրանից և այն իրողությունից, որ հերթական անգամ Հայկական հարցը կարող էր «լուծվել» հայ ժողովրդի բնաջնջմամբ, ռամկավարները որդեգրեցին բոլշևիկներին քննադատելու և նրանց հայակործան քաղաքականությունը մերկացնելու ուղեգիծ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն: - Փարիզ: 1947:
2. **Ղազարեան Վ.**, Համառոտ պատմութիւն ՌԱԿ-ի, Պէյրուք, 1978:
3. **Լազեան Գ.**, Հայաստան և հայ դատը: - Եր., 1991:
4. Հայ ազատագրական շարժման օրերէն: - Եր., 2003:
5. Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ 1794-1980, կազմեց Բարդույան Մ. Ա.: - Եր., 1986:
6. ՌԱԿ վավերագրեր:
7. **Սարգսյան Ս.**, Արևելահայ ռամկավար մամուլը 1918-1920 թթ.: - Եր., 2019:
8. **Սարգսյան Ս.**, Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.): - Եր., 2009:
9. **Տեփոյեան Պ.**, Ատոմ Ասլանեան: - Պէյրուք, 1988:
10. «Ազգ» պարբերական
11. «Արարատ» ամսագիր
12. «Արև» պարբերական
13. «Արևելք» պարբերական
14. «Չարթունք» պարբերական
15. «Մշակ» պարբերական
16. «Վան-Տոսպ» պարբերական

Տճանա/Հանձնվել է՝ 15.10.2023
 Բեւենզիրոճան/Գրախտալել է՝ 22.10.2023
 Քրինյա/Ընդունվել է՝ 29.10.2023